Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/44257/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» հունվարի 2024թ. **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր Ս. Խաչատրյան), ծանոթանալով Աննա Հայրապետի Աղաջանյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի և «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի միջև կնքված ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/38-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին Երևանի քաղաքապետարանի որոշումը առոչինչ, ոչ իրավաչափ ճանաչելու մասին հայցադիմումին և կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց

14.12.2023 թվականին Աննա Հայրապետի Աղաջանյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի և «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի միջև կնքված ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/38-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին Երևանի քաղաքապետարանի որոշումը առոչինչ, ոչ իրավաչափ ճանաչելու մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Ս. Խաչատրյանին մակագրվել է 21.12.2023 թվականին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 26.12.2023 թվականին:

29.12.2023 թվականին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ս. Խաչատրյան) որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

22.01.2024 թվականին հայցադիմումը կրկին ներկայացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան և նույն օրը մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Խաչատրյանին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 23.01.2024 թվականին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների

պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն գտնում է, որ վեճը քննության է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանողից պահանջել գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234-րդ և 234.6-րդ, 234.9-րդ, 199-200-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Աննա Հայրապետի Աղաջանյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի և «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի միջև կնքված ԵՔ-ԷԱՃՇՁԲ-23/38-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին Երևանի քաղաքապետարանի որոշումը առոչինչ, ոչ իրավաչափ ճանաչելու մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Երևանի քաղաքապետարանից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ

3.1. ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

3.2. Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

3.3. Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

3.4. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3.5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 11.03.2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ